ԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՀԱՐՑԵՐԸ ՍՍՀՄ ԳԱ ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻՄ (1941—1943)

ՍԱՄՎԵԼ ԿՈՒՐԵՂՅԱՆ

ՍՍՀՄ ԳԱ հայկական մասնաճյուղի (Արմֆան) 1941—1943 թթ. գործունեության պլանավորման վերլուծությունը* բավականին դժվարին խնդիր է, քանի որ այդ երեք տարիներն Արմֆանի կյանքում միանգամայն տարբեր էին։ Այդ տարիների առանձնահատկությունը հնարավորություն չի տալիս դրանք քննելու համատեղ, ուստի ստիպված ենք տվյալ շրջանի Արմֆանի համակարգում գիտական հետազոտությունների կազմակերպման ու պլանավորման պրոբլեմները հետազոտել ժամանակագրական հաջորդականությամբ։

Խոսելով Արմֆանի 1941 թ. գործունեության մասին, հարկ է նկատել, որ գիտական հետազոտությունների զարգացման մեջ էական փոփոխություններ մտցրեց Հայրենական մեծ պատերազմը։ Այդ պատճառով էլ Արմֆանի 1941 թ. գիտական գործունեությունը նպատակահարմար է բաժանել երկու շրջանի՝ նախապատերազմյան (առաջին կիսամյակ) և պատերազմական (երկրորդ կիսամյակ)։ Այդ երկու շրջաններն էականորեն տարբերվում էին ինչպես գիտական հետազոտությունների բովանդակությամբ և ուղղվածությամբ, այնպես էլ Արմֆանի առջև ծառացած խնդիրներով ու նպատակներով։ Ընդ որում, դա վերաբերում է ոչ միայն գիտական հետազոտություններին, այլև Արմֆանի կադրային, ֆինանսական ու նյութատեխնիկական պոտենցիալին, ինչպես նաև գիտական հետազոտությունների կազմակերպմանն ու պլանավորմանը։ 1941 թ. առաջին կիսամյակում գիտական հետազոտությունները հիմնականում կատարվում էին երկու ուղղությամբ. 1) հանրապետության արտադրողական ուժերի ուսումնասիրում, նրա բնական հարստությունների հայտնաբերում, բնական ու բուսական օրգանիզմների մշակում և վերափոխում, 2) հայ ժողովրդի մշակութային ժառանգության ուսումնասիրում ու բացահայտում և սովետական շրջանի կուլտուրական շինարարության հարցերի մշակում։ Այսպիսով, 1941 թ. առաջին կիսամյակում գիտական հետազոտությունները կատարվում էին այն նույն ստրատեգիական ուղղություններով, որոնք որոշվել էին դեռ 1938 թ.։ Երկրորդ կիսամյակում գիտական հետազոտություններն ընթանում էին նաև ՍՍՀՄ պաշտպանական հզորության ամրապնդման ուղղությամբ։ Բնական է, որ պաշտպանական նշանակություն ունեցող պրոբլեմների ու թեմաների ուսումնասիրության անհրաժեշտությունը չէր կարող չանդրադառնալ Արմֆանի հետազոտությունների ընդհանուր ընթացքի վրա։ Դա հանգեցրեց ինչպես գիտական հետազոտությունների պլանավորման, այնպես էլ պլանային պրոբլեմների ու թեմաների կատարման պրոցեսի էական փոփոխությանը։

1941 թ. Արմֆանի համակարգում գործում էին 17 գիտահետազոտական կազմակերպություններ, կոլեկտիվներ ու ընկերություններ՝ կենսաբանության ինստիտուտը, բուսաբանության ինստիտուտը, քիմիայի ինստիտուտը, երկրաբանության ինստիտուտը, պատմության և նյութական կուլտուրայի ինստիտուտը, գրականության և լեզվի ինստիտուտը, հողագիտության սեկտորը, տնտեսագիտության սեկտորը, շրջէներգետիկ սեկտորը, աստղագիտական դիտարանը, Սևանի հիդրոկենսաբանական կայանը, պատմության թանգարանը, սեյսմիկ

---

* Արմֆանի գոյության առաջին հինգ տարիների գործունեության մասին տե՛ս Սամվել Կուրեղյան, Գիտության պլանավորման հարցերը ՍՍՀՄ ԳԱ հայկական մասնաճյուղում (1935—1940), (ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր հասարակական գիտություններից», 1981, № 10, էջ 14—22)։

կայանը, բուսաբանական այգին, պատմական հուշարձանների պահպանության կոմիտեն, բուսաբանական ընկերությունը։ 1942 թ. հունվարի 1-ի դրությամբ Արմֆանի գիտահետազոտական կազմակերպություններում աշխատում էր 190 մարդ[1]։ Նրանցից մեկն ակադեմիկոս էր, մեկը՝ ՍՍՀՄ ԳԱ թղթակից անդամ, 15-ը՝ գիտության դոկտոր, 43-ը՝ գիտության թեկնածու, 23-ը՝ առանց գիտական աստիճանի ավագ գիտաշխատող, 16-ը՝ ավագ գիտաշխատողի պաշտոնակատար, 54-ը՝ կրտսեր գիտաշխատող, իսկ 37-ը՝ գիտատեխնիկական աշխատակից։ Գիտական կադրերի պատրաստման գործում կարևոր դեր էր խաղում ասպիրանտուրան։ 1940—1941 ուսումնական տարում Արմֆանի համակարգում առաջին անգամ մրցույթային սկզբունքով ասպիրանտուրայում ընդունելություն կատարվեց։ Մրցույթային ընդունելությանը մասնակցում էին 37 հոգի՝ 10 աղատ տեղի համար։ Մրցույթային ընտրության հետևանքով ասպիրանտուրա ընդունվեցին 10 երիտասարդ գիտաշխատողներ, որոնք արդեն գիտահետազոտական աշխատանքի որոշակի փորձ ունեին։ Հայրենական մեծ պատերազմի սկզբնական օրերին Արմֆանում հաշվվում էին 34 ասպիրանտներ։ 1941 թ. վերջին ասպիրանտների թիվն ընդամենը 17 էր, այսինքն՝ Արմֆանի ասպիրանտների ուղիղ կեսը զորակոչվել էր սովետական բանակի շարքերը։ Արմֆանի բոլոր գիտահետազոտական հաստատություններում 1941 թ. երկրորդ կիսամյակում տեղի էր ունեցել գիտատեխնիկական կադրերի թվաքանակի կրճատում, ընդ որում, նաև բարձրորակ գիտական կադրերի։ Այդ կրճատումն իրականացվում էր համաձայն գիտահետազոտական հաստատությունների աշխատողների թվի կրճատման մասին Արմֆանի նախագահության 1941 թ. օգոստոսի 27-ի որոշման։

Չնայած գիտաշխատողների թվաքանակի կրճատմանը, Արմֆանն ուներ լայն ճակատով գիտական հետազոտություններ կատարելու ունակ բավական զգալի թվով կադրային պոտենցիալ։ Դա կապված էր այն բանի հետ, որ Արմֆանում դիտական կադրերի հարցում նպատակասլաց և ճիշտ քաղաքականություն էր վարվում։ Մասնաճյուղի ղեկավարությունը հոգ էր տանում բարձր որակավորման գիտական կադրերի պատրաստման և կադրային պոտենցիալը գիտական հետազոտությունները բարձր մակարդակով կատարելու ունակ երիտասարդներով համալրելու մասին։

Կրճատվում էր ոչ միայն գիտահետազոտական հաստատությունների գիտական կադրերի թվաքանակը, այլև այդ հաստատությունների ֆինանսավորման ծավալը։ Այսպես, օրինակ, երկրաբանության ինստիտուտի ֆինանսավորումը 1941 թ. պլանային համեմատությամբ կրճատվեց 12,14%-ով և կազմեց 681,5 հազ. ռ., բուսաբանության ինստիտուտինը և այգունը՝ 3,7%-ով (788,5 հազ. ռ.), հողագիտության սեկտորինը՝ 19,8%-ով (117,1 հազ. ռ.), չրաէներգետիկ սեկտորինը՝ 28%-ով (222,8 հազ. ռ.)[2]։ Չնայած շատ գիտահետազոտական հաստատություններում տեղի ունեցավ գիտական հետազոտությունների 1941 թ. համար նախատեսված ծավալի կրճատում, ընդհանուր առմամբ Արմֆանի գիտական հետազոտությունների ֆինանսավորումը մնաց համարյա 1940 թ. մակարդակի վրա՝ 5767,5 հազ. ռ.[3]։ Առանձին գիտահետազոտական հաստատությունների ֆինանսավորման կրճատումը չի կարելի դիտարկել գիտական կադրերի թվաքանակի, ինչպես նաև գիտահետազոտական հաստատությունների թեմատիկ պլանի փոփոխությունից կտրված, քանի որ վերջիններս, իրենց հերթին, էապես անդրադարձան գիտական հետազոտությունների ֆինանսավորման փոփոխության վրա։

1941 թ. առաջին կիսամյակում նկատվում էր գիտահետազոտական հաստատությունների նյութատեխնիկական բազայի աճ։ Օրինակ, կենսաբանության և բուսաբանության ինստիտուտներում կառուցվում էին չերմոցներ և լաբորատոր շինություններ։ Կառուցվում էին նաև քիմիայի ինստիտուտի աշխատասենյակները։ Բոլոր ինստիտուտները կանոնավոր ձեռք էին բերում սարքավորումներ և գիտական սարքեր։ Սակայն Հայրենական մեծ պատերազմի սկզբից Արմֆանի գիտատեխնիկական բազայի աճը ստիպողաբար կրճատվեց, իսկ նոր լաբորատորիաների շինարարությունը դադարեցվեց։ Կանգ առավ նաև գիտական սարքավորումների ձեռքբերումը։ Այսպես, օրինակ, աստղագիտական դիտարանը երկրորդ կիսամյակում ըստ պայմանագրի պետք է ստանար մի շարք հետազոտական գործիքներ, սակայն

---

1 ՀՍՍՀ ԳԱ արխիվ, ֆ. 1, ց. 1, գ. 3, 1941, թ. 75։
2 Նույն տեղում, թ. 76։
3 Նույն տեղում։

պատերազմի պայմաններում դա չհաջողվեց իրագործել[4]։ Պատերազմի սկսվելը բացասաբար անդրադարձավ նաև նոր ստեղծված և երկրաբանության ինստիտուտի մի սենյակում տեղավորված տնտեսագիտության սեկտորի նյութատեխնիկական բազայի վրա։ Մի սենյակում աշխատում էին վիճակագիրները, տեսարանները, գծագրողները և այլն։ Տնտեսագիտության սեկտորի աշխատողների մի մասը տեղավորված էր Արմֆանի այլ հաստատություններում և նույնիսկ տանը։

Արմֆանի տնտեսագիտության սեկտորը ստեղծվեց պատերազմի սկզբին և շատ կարևոր դեր խաղաց ՀՍՍՀ-ում տնտեսագիտական մտքի զարգացման գործում, չնայած նրա կազմակերպումն ու գործունեությունը 1941 թ. սկզբին մեծ հարցականի տակ էր։ Բանն այն է, որ Արմֆանի համակարգում տնտեսագիտական պրոբլեմներն ուսումնասիրող ինքնուրույն կազմակերպության ստեղծման հարցը դրվել էր դեռ 1940 թ. սկզբին՝ Սևան-Զանգու սիստեմի կոմպլեքսային օգտագործման սխեմայի մշակման կապակցությամբ։ Այդ ասպարեզում նախնական աշխատանքները բացահայտեցին մի շարք տնտեսագիտական հարցերի խոր ուսումնասիրման անհրաժեշտությունը, քանի որ հանրապետության ջրային ռեսուրսների օգտագործման հարցը պետք է քննվեր և լուծվեր բոլոր արտադրողական ուժերի օգտագործման հետ շաղկապված։ Սրանից բխում էր այնպիսի գիտական հաստատության ստեղծումը, որը ՍՍՀՄ համապատասխան գիտահետազոտական կազմակերպությունների օգնությամբ կարողանար տնտեսագիտական թեմատիկայի պլանային մշակումը դնել անհրաժեշտ տեսական մակարդակի վրա։ Սեկտորի ստեղծումը նաև նպատակ էր հետապնդում պատրաստելու բարձրորակ տնտեսագիտական կադրեր։ Հաշվի առնելով նշված հանգամանքները, Արմֆանի նախագահությունը որոշեց 1941 թ. սկզբից իր համակարգում ստեղծել տնտեսագիտության սեկտոր։ Սակայն միայն 1941 թ. սեպտեմբերին, երբ տնտեսագիտության սեկտորի հաստիքներն ու նախահաշիվները վերջնականապես հաստատվեցին, տնտեսագիտության սեկտորը հնարավորություն ստացավ դուրս գալ ջրէներգետիկ սեկտորի կողմից։ Պատերազմը սկսվելու կապակցությամբ աշխատողների նախնական հաստիքները և ֆինանսական միջոցները զգալիորեն կրճատվեցին։ Սեկտորի թեմատիկան հիմնականում ուներ հետևյալ ուղղությունները. 1) ժողովրդական տնտեսության զարգացման ուսումնասիրությունն ինչպես ըստ առանձին ճյուղերի, այնպես էլ կոմպլեքսային ձևով, 2) ժողովրդական տնտեսության կոմպլեքսային զարգացման սխեմայի կառուցվածքի պրոբլեմներն ըստ կարևորագույն ճյուղերի, 3) Մերձավոր արևելքի սահմանակից երկրների տնտեսության ուսումնասիրության պրոբլեմներ, 4) Հայաստանի ժողովրդական տնտեսության և տնտեսագիտական մտքի զարգացման պրոբլեմներ[5]։ Սակայն պատերազմական պայմանների համապատասխան տնտեսագիտական սեկտորի թեմատիկայի մեջ զգալի փոփոխություններ կատարվեցին։

Այսպիսով, պատերազմը սկսվելու պայմաններում գործող գիտահետազոտական հաստատությունները ոչ միայն պահպանվեցին, այլև ստեղծվեցին նորերը, այսինքն՝ գիտական հետազոտությունների ճակատը նույնիսկ ընդլայնվեց։

Կատարելագործվեց նաև Արմֆանի համակարգում իրականացվող գիտական հետազոտությունների պլանավորումը։ Գիտական հետազոտությունների կազմակերպման մեջ կրճատվեցին կրկնորդումն ու զուգահեռությունը, ինչպես նաև փոխանցվող թեմաների քանակը։ Դրան նպաստեց ՍՍՀՄ ԳԱ նախագահության 1940 թ. դեկտեմբերի 3-ի որոշումը, որի համաձայն ՍՍՀՄ ԳԱ բոլոր գիտահետազոտական հաստատությունները պետք է հաշվետվությունները ներկայացնեին ըստ միասնական պլանի։ Այդ պլանում կարևոր նշանակություն էր տրվում աշխատանքի նպատակի ու բովանդակության նկարագրությանը։ Հաշվետու տարում անավարտ թեմաների մասին անհրաժեշտ էր նշել, թե կոնկրետ ինչ է արվել։ Եթե այդպիսի թեման փոխանցվող էր, ապա հարկ էր ցույց տալ, թե հաշվետու տարում թեմայի տվյալ մասն ինչպես է կատարվել։ Դրա հետ միասին կարևոր նշանակություն էր տրվում ստացած արդյունքների էության շարադրմանը՝ կոնկրետ գիտական և պրակտիկ նշանակության մատնանշումով։ Սակայն չի կարելի կարծել, թե քննվող ժամանակաշրջանում լիովին վերացվել էին կրկնորդման ու զուգահեռայնության դեպքերը և փոխանցվող թեմաներ չկային։ Օրինակ, բուսաբանության ու կենսաբանության ինստիտուտների և Սևանի հիդրոկենսաբանական կայանի թեմատիկ պլաններում քիչ չէին կիրառական նշանա-

4 Նույն տեղում, էջ 260։

5 Նույն տեղում, թ. 233։

կություն ունեցող թեմաները, որոնք սկսվել էին դեռ 1937—1939 թթ.[6]։ Գիտական հետազոտությունների նկատվող զուգահեռայնությունն ու կրկնորդումն արդյունք էին հարակից պրոֆիլի գիտահետազոտական հաստատությունների միջև անբավարար կապի, կատարված աշխատանքի հաշվառման, ինչպես և Արմֆանի գիտահետազոտական հաստատությունների ու այլ գերատեսչությունների միջև փորձի լայն փոխանակման բացակայության։ Օրինակ, գյուղատնտեսական ինստիտուտը և Արմֆանի բուսաբանության ինստիտուտը կատարում էին Հայաստանի մերձարևադարձային շրջանների երկրաբուսաբանական ուսումնասիրությունը։ Նույն զուգահեռայնությունն էր դիտվում նաև հողագիտության սեկտորի և էռոզիոն պրոցեսներն ուսումնասիրող դաշտային կայանի աշխատանքներում։ Ընդորում, այդ պրոբլեմն ուներ կարևոր ժողովրդատնտեսական նշանակություն և պահանջում էր կոմպլեքսային լուծում՝ միասնական մեթոդական կենտրոնի ղեկավարությամբ[7]։

Արմֆանի գիտական հետազոտությունները պատերազմը սկսվելու կապակցությամբ ավելի մեծ չափով էին կողմնորոշվում դեպի պրակտիկ և ռազմական խնդիրների լուծումը։ Սակայն որոշ գիտահետազոտական հաստատություններ, այնուամենայնիվ, անբավարար էին հաշվի առնում հանրապետության ժողովրդական տնտեսության պահանջարկները։ Այսպես, օրինակ, ՀՍՍՀ պետպլանը քիմիայի ինստիտուտի թեմատիկան հանրապետության քիմիական արդյունաբերության կարիքներին մոտեցնելու նպատակով մշակման համար այդ ինստիտուտին ներկայացրեց 26 թեմա[8]։ Սակայն քիմիայի ինստիտուտը հետազոտության համար առանձնացրեց ընդամենը 2—3 թեմա։ Պետպլանը քիմիայի ինստիտուտի ղեկավարությունից պահանջեց գիտական հետազոտությունների պլանի մեջ մտցնել կարևոր ժողովրդատնտեսական նշանակություն ունեցող գոնե ևս 5 թեմա[9]։

Արմֆանի գործունեության վերջին երկու տարիներին (1942, 1943) առանց բացառության նրա բոլոր հաստատությունները լուրջ ուշադրություն էին նվիրում արտադրության մեջ գիտական հետազոտությունների արդյունքների ներդրմանը։ Այսպես, հողագիտության սեկտորին հաջողվեց բարձր բերք ստանալ էռոդիայի ենթարկված հողերում։ Դա կատարվեց հողի լվացման կոմբինացված մեթոդի մշակման շնորհիվ, որի օգնությամբ աղուտահողերից աղերի մինչև 50%-ը հեռացվում էր[10]։ Քիմիայի ինստիտուտում ստացվեց տեխնիկական քլորական ամոնիակ։ Դրա ստացման համար որպես հումք օգտագործվում էին մոխիր ու քլոր, որոնք կային Ս. Մ. Կիրովի անվան քիմկոմբինատում։ Այդ կոմբինատում կառուցվեց քլորական ամոնիակի արտադրության հարմարանք[11]։ Նույն ինստիտուտի կողմից կալցիումային կարբիդի արտադրության համար անհրաժեշտ դեֆիցիտային նյութի փոխարեն առաջարկվեց նոր նյութ և եղանակ[12]։ Բուսաբանության ինստիտուտը քիմիայի ինստիտուտի հետ պաշտպանական նպատակով մշակեց բուսական հումք պարունակող սապոնինի (փրփրանյութ) ստացման մեթոդ։ Այն անհրաժեշտ էր ոչ միայն բժշկության և քիմիական արդյունաբերության, այլև ժողովրդական տնտեսության մյուս ճյուղերի համար[13]։ Տնտեսագիտության սեկտորը ավարտեց և ՀՍՍՀ պետպլանին հանձնեց կոլտնտեսությունների գծով հանրապետության աշխատանքային ռեսուրսների հաշվեկշռի արդյունքները, որոնք կարևոր նշանակություն ունեին բանվորական ուժի օգտագործման հարցի կարգավորման բնագավառում։ 1942 թ. ժողովրդատնտեսական պլանը կազմելու ժամանակ օգտագործելու նպատակով պետպլանին հանձնվեցին նաև ՀՍՍՀ պարենային և հումքային ռեսուրսների մասին անհրաժեշտ տվյալներ։ Բացի այդ, ռազմական գերատեսչության համար կատարվեցին 13 աշխատանքներ (12 տպագրական մամուլ ընդհանուր ծավալով, այդ թվում 14 քարտեզ)[14]։ Հանրապետության ժողովրդական տնտեսության պրակտիկայի հետ Արմֆանի գիտական հետազոտությունների կապերի ուժեղաց-

---

6 Նույն տեղում, գ. 6, 1941, թ. 13։
7 Նույն տեղում, էջ 14։
8 Նույն տեղում, էջ 10։
9 Նույն տեղում։
10 Նույն տեղում, գ. 7, 1942, թ. 4։
11 Նույն տեղում, գ. 10, 1942, թ. 29։
12 Նույն՝ տեղում, թ. 30, գ. 7, 1942, թ. 33—34։
13 Նույն տեղում, գ. 10, 1942, թ. 34։
14 Նույն տեղում, թ. 37, գ. 7, թ. 35։

ման օրինակների թվարկումը կարելի է շարունակել, բայց բերվածներն էլ խոսում են այն մասին, որ 1942 թ. պրակտիկայի հետ գիտության կապն էապես ուժեղացել էր։

Որոշ չափով ամրապնդվել էր նաև Արմֆանի նյութական բազան։ 1942 թ. ՀՍՍՀ ժողկոմխորհի որոշմամբ Արմֆանին լրացուցիչ հատկացվեց 100 հազ. ռ., նախքան պատերազմը սկսված կառույցները (գլխավորապես շինարարները) ավարտելու և կոնսերվացնելու համար[15]։ Ամրողջությամբ վերցրած, 1942 թ. Արմֆանին արված հատկացումները կազմեցին 4384,6 հազ. ռ., այսինքն՝ 1372,9 հազ. ռ. կամ 1,32 անգամ պակաս, քան 1941 թ.[16]։

Ֆինանսավորման ծավալը հաստատվեց 4173, 6 հազ. ռ. չափով, բայց ՍՍՀՄ ժողկոմխորհի որոշման հիման վրա գիտաշխատողների դրույքների ավելացման համար լրացուցիչ հատկացվեց 211 հազ. ռ.։ Այսպիսով, 1942 թ. Արմֆանի իրացրած ֆինանսական միջոցների գումարը կազմեց 4384,6 հազ. ռ., այսինքն 5,1%-ով ավելի, քան նախապես հաստատվել էր։ Ընդորում, աշխատավարձի աճի շնորհիվ ավելացավ նաև Արմֆանի առանձին գիտահետազոտական հաստատությունների ֆինանսական միջոցների նախապես հաստատված ծավալը[17]։

Ֆինանսական այդ միջոցներից բացի, Արմֆանը տնօրինում էր տարբեր ժողկոմատներից և կազմակերպություններից ստացված պայմանագրային միջոցները։ Առանց դրանց դժվար էր կատարել պլանավորված գիտական հետազոտությունների ամբողջ ծավալը, քանի որ Արմֆանն իր գիտական հետազոտությունների մասշտաբով նշանակալիորեն գերազանցել էր հատկացվող դրամական միջոցների ծավալը։ Այդ տեսակետից պայմանագրային աշխատանքները և դրանց հաստատումն վարձատրությունն իրենց արդարացնում էին, քանի որ Արմֆանի գիտահետազոտական հաստատություններին դրանք թույլ էին տալիս բյուջետային ֆինանսական միջոցների անփոփոխության պայմաններում կատարելու պլանային բարձր առաջադրանքներ։ Չնայած դրան, Արմֆանի գրեթե բոլոր գիտահետազոտական հաստատություններում, 1941 թ. համեմատությամբ, 1942 թ. նկատվում էր ֆինանսական միջոցների զգալի կրճատում։ Այսպես, կենսաբանության ինստիտուտի ֆինանսավորումը կրճատվեց 13 %-ով, երկրաբանության ինստիտուտինը՝ 15%-ով, բուսաբանության ինստիտուտինը և այգունը՝ 27,8%-ով[18]։ Բացառություն էին կազմում տնտեսագիտության և հողագիտության սեկտորներն ու քիմիայի ինստիտուտը, որոնցում, ընդհակառակը, նկատվում էր հատկացումների ծավալի մեծացում[19]։ Տնտեսագիտության սեկտորի ֆինանսական միջոցների կտրուկ ավելացումը պայմանավորված էր հիմնականում երկու հանգամանքով։ Նախ, 1941 թ. տնտեսագիտության սեկտորն իբրև ինքնուրույն գիտահետազոտական հաստատություն գործեց ընդամենը չորս ամիս, երկրորդ, այն կարևոր դերով, որ պատերազմի տարիներին խաղում էին տնտեսագիտական հետազոտությունները։ Այդ տարիներին կարևոր նշանակություն ուներ նաև հողի բարելավման հաշվին գյուղատնտեսության բերքատվության աճը։ Այդ իսկ պատճառով պատահական չէ, որ հողագիտության սեկտորի ֆինանսավորման ծավալը ոչ միայն չկրճատվեց, այլև ավելացավ։ Ինչ վերաբերում է քիմիայի ինստիտուտին, ապա նրա ֆինանսավորման որոշ աճը կապված էր ինստիտուտի մի շարք շենքեր սարքավորելով, ինչը լրացուցիչ միջոցներ էր պահանջում։

1942 թ. Արմֆանում, 1941 թ. համեմատությամբ, նկատվում էր գիտական և գիտատեխնիկական աշխատողների թվաքանակի աճ։ Արմֆանի գիտական և գիտատեխնիկական աշխատողների թվաքանակն ավելացել էր 25-ով կամ 13,2%-ով և կազմում էր 215 մարդ[20]. այդ թվում երկու ակադեմիկոս, ՍՍՀՄ ԳԱ մեկ թղթակից անդամ, 18 գիտության դոկտոր, 46 գիտության թեկնածու, առանց գիտական աստիճանի 25 ավագ գիտաշխատող, 25 ավագ գիտաշխատողի պաշտոնակատար, 54 կրտսեր գիտաշխատող և 44 գիտատեխնիկական աշխատողներ[21]։

Արմֆանի առանձին գիտահետազոտական հաստատությունների կադրերի շարժն անհամաչափ էր։ Այդ տարվա ընթացքում հատկապես շոշափելի չափով ավելացան բնագիտական պրոֆիլի գիտահետազոտական հաստատությունների կադրերը։ Կենսաբանության ինստիտուտի գիտա-

---

15 Նույն տեղում, գ. 4, 1942, թ. 27։

16 Նույն տեղում, գ. 7, 1942, թ. 43, գ. 3, 1941, թ. 76։

17 Նույն տեղում, գ. 7, 1942, թ. 43։

18 Նույն տեղում, և գ. 3, 1941, թ. 76։

19 Նույն տեղում։

20 Նույն տեղում, գ. 7, 1942, թ. 9, գ. 3, 1941, թ. 75։

21 Նույն տեղում, գ. 7, 1942, թ. 9։

կան կադրերի թվաքանակն աճեց 7 մարդով և կազմեց 43 հոգի, բուսաբանության և քիմիայի ինստիտուտներինը ու հողագիտության սեկտորինը՝ 4-ական մարդով, համապատասխանաբար կազմելով 26, 33 և 10 հոգի։ Հասարակական գիտություններից աճ նկատվեց տնտեսագիտության սեկտորում՝ 4 հոգի։ Արմֆանի կադրերը համալրվում էին նաև գրականության թանգարանի հաստիքների (10 մարդ) հաշվին։ Պատերազմի ժամանակ պատմության թանգարանի հաստիքները (10 մարդ) չկրճատվեցին։ Դա վկայում է պատերազմի տարիներին հանրապետության աշխատավորության հայրենասիրական դաստիարակությանը մեծ կարևորություն տալու մասին։

Եթե բնական և հասարակական գիտությունների գծով դիտվում էր կադրերի թվաքանակի զգալի ավելացում, ապա հումանիտարների գծով նկատելի էր որոշ նվազում։ Այսպես, գրականության և լեզվի ինստիտուտում կադրերի թվաքանակը կրճատվեց 4-ով և կազմեց 11 մարդ[22]։

1942 թ. առաջին կիսամյակում, Արմֆանի համակարգում պաշտպանվեցին մեկ դոկտորական և երկու թեկնածուական դիսերտացիաներ։ Շարունակում էր գործել Արմֆանի ասպիրանտուրան։ Նրանում 1942 թ. հուլիսի 1-ի տվյալներով սովորում էին 11, իսկ տարեվերջին՝ 8 հոգի։ Նրանք պատրաստվում էին գրեթե բոլոր գիտահետազոտական հաստատությունների գծով (բացառություն էին կազմում երկրաբանության ինստիտուտի և ջրաէներգետիկ, հողագիտության ու տնտեսագիտության սեկտորները)։ Սակայն Արմֆանի բոլոր ասպիրանտները սովորում էին առանց արտադրությունից կտրվելու, որը բացասաբար էր անդրադառնում գիտական կադրերի պատրաստման որակի վրա։ Այդ իսկ պատճառով հրատապ անհրաժեշտություն դարձավ ընդունակ երիտասարդների ընդգրկումը ասպիրանտուրա՝ արտադրությունից կտրված ուսուցմամբ։

1942 թ. Արմֆանի կառուցվածքում առանձնակի փոփոխություններ չկատարվեցին, եթե հաշվի չառնենք, որ լուսժողկոմատի համակարգից Արմֆան տեղափոխվեց գրականության թանգարանը, օգոստոսին ստեղծվեց ակադ. Ն. Մառի անվան կաբինետը, իսկ տարեվերջին Արմֆանին հանձնվեց Երևանի կենդանաբանական այգու գիտական ղեկավարությունը[23]։

Արմֆանի գործունեությունը 1943 թ. ևս կառուցված էր ռազմական ժամանակաշրջանի պահանջներին համապատասխան[24]։ Մասնաճյուղի առաջ ծառացած էր ռազմական ժամանակաշրջանի պահանջներին առավելագույն չափով համապատասխան բոլոր աշխատանքների հետագա վերակառուցման խնդիրը։ Արմֆանի բնագիտական պրոֆիլի գիտահետազոտական հաստատությունների առաջ դրված էր հանրապետության արտադրողական ուժերի ու ռեսուրսների հետագա ուսումնասիրության խնդիրը՝ պաշտպանական նպատակով դրանց յուրացման համար։

Մասնաճյուղի հումանիտար պրոֆիլի հաստատություններն ուսումնասիրում էին հայ ժողովրդի պատմությունն ու մշակույթը և հատկապես այն հարցերը, որոնց լուծումն ու մասսայականացումը ժողովրդական զանգվածներին կդաստիարակեին սովետական հայրենասիրության և ֆաշիստական զավթիչների նկատմամբ անհաշտ ատելության ոգով[25]։ 1943 թ. Արմֆանում կատարվեց 203 գիտական թեմա[26]։ Դրանից առավել մեծ քանակ բաժին ընկավ պատմության ինստիտուտին՝ 33 թեմա, կենսաբանության ինստիտուտին՝ 21 թեմա, պատմության թանգարանին, գրականության և լեզվի ինստիտուտին՝ 21-ական թեմա։ Այսպիսով, այդ չորս հաստատություններում կատարվեց Արմֆանի բոլոր գիտական թեմաների 47,8%-ը։ Ավարտված թեմաների թիվը կազմեց 84, այսինքն ամբողջի 41,4%։ Արդեն ավարտված, բայց արտրոբացիայի ենթակա թեմաների թիվը 26 էր, այսինքն կազմում էր Արմֆանում մշակվող թեմաների 12,8%-ը։ Եթե նկատի ունենանք, որ պրակտիկ ստուգում պահանջող թեմաների մեծ մասը համապատասխան արտրոբացիայի չէր ենթարկվում ոչ թե այդ թեմաները կատարող հաստատությունների մեղքով, այլ շատ դեպքերում դրա համար անհրա-

---

22 Նույն տեղում, գ. 3, 1941, թ. 75։

23 Նույն տեղում, գ. 10, 1942, թ. 27։

24 Անդրադառնալով Արմֆանի 1943 թ. գործունեությանը, հարկ է հաշվի առնել, որ խոսքը պետք է վերաբերի այդ տարվա միայն 11 ամիսներին, քանի որ ՀՍՍՀ Ժողկոմխորհի 1943 թ. նոյեմբերի 10-ի № 702 որոշման համաձայն Արմֆանի բազայի վրա ստեղծվեց ՀՍՍՀ գիտությունների ակադեմիան (Նույն տեղում, գ. 6, 1943, թ. 2)։

25 Նույն տեղում, գ. 7, 1943, թ. 38։

26 Նույն տեղում, թ. 53։

ժեշտ պայմանների բացակայության պատճառով, ապա կպարզվի, որ ավարտված մշակումների թիվը կազմում էր 1943 թ. Արմֆանում կատարված թեմաների 54,2%-ը։ Հարկ է հաշվի առնել, որ 57 թեմա կամ ամբողջի 28,1%-ը պլանով անցնում էին 1944 թ.։ Դա նշանակում է, որ այդ թեմաները չէին տեղավորվում տարեկան պլաններում։ Չնայած չկատարման պատճառով 1944 թ. փոխանցվող թեմաները շատ չէին (ընդամենը 9), այնուամենայնիվ, անհրաժեշտ էր առավել հիմնավոր սահմանել դրանց կատարման իսկական ժամկետները։ Բավական մեծ բաժին էին կազմում տարվա ընթացքում հանված թեմաները՝ 13,3% (27 թեմա)։ Մասամբ դա պայմանավորված էր համապատասխան սարքավորումների անբավարարությամբ, ինչպես նաև այդ հետազոտությունների համար անհրաժեշտ գիտական կադրերի բացակայությամբ, մասամբ էլ իրենց՝ թեմաների, անորոշակիությամբ։ Պրակտիկայում ներդրված թեմաների թիվը կազմում էր 52։ Դրանց 65,4%-ը սկսվել էր նախքան 1943 թ.։ Այդ թվականին հետազոտել սկսված և նույն տարում արտադրության մեջ ներդրված թեմաները կազմում էին հետազոտվող թեմաների միայն 8,9 և ավարտվածների 21,4%-ը։ Արտադրության մեջ ավարտված թեմաների անբավարար ներդրումը բացատրվում էր նրանով, որ Արմֆանն անհրաժեշտ լաբորատոր փորձարկումների համար տեխնիկապես թույլ էր դնված։ Զգալի դեր էր խաղում նաև առանձին արտադրական ձեռնարկությունների կողմից գիտական նոր աշխատանքներն արտադրության մեջ ներդնելու նկատմամբ դրսևորած որոշ անտարբերությունը։

Գիտահետազոտական հաստատությունները ոչ միայն չունեին իրենց ավարտված աշխատանքներն արդյունաբերության ենթարկելու հնարավորություն, այլև գիտական հետազոտություններ կատարելու համար անհրաժեշտ նյութատեխնիկական բազա։ 1943 թ. Արմֆանի նյութատեխնիկական բազայում 1942 թ. համեմատությամբ էական փոփոխություններ չկատարվեցին։ Անբավարար էր նաև սարքավորումների, ռեակտիվների և հանդերձանքի ստացման վիճակը։ Այդ պատճառով լաբորատոր և փորձարարական աշխատանքները խիստ դանդաղում կամ էլ կանգ էին առնում[27]։ Որոշ գիտահետազոտական հաստատությունների աշխատատեղերը չէին բավականացնում։

Որոշակի անհամամասնություն էր նկատվում նաև Արմֆանի ֆինանսավորման բնագավառում։ Ֆինանսավորման ընդհանուր ծավալը 1943 թ. կազմում էր 5503 հազ. ռ., որը 1,26 անգամ ավել էր քան 1942 թ.[28]։ Բայց միջոցների այդ աճը հիմնականում կատարվել էր աշխատավարձի ֆոնդի հաշվին։ Այն 1942 թ. համեմատությամբ 1943 թ. ավելացել էր 1,5 անգամ և կազմում էր 3064,6 հազ. ռ., նախորդ տարվա 2055 հազ. ռ. դիմաց։ Դրա հետևանքով որոշակի անհամապատասխանություն էր առաջացել գիտական հետազոտություններին ուղղված և գիտական ու գիտատեխնիկական աշխատողների աշխատավարձի համար հատկացված միջոցների ծավալների միջև։

Գիտությանը հատկացված միջոցներն Արմֆանում ընդհանուր առմամբ կազմում էին 1402,5 հազ. ռ., իսկ աշխատավարձի ֆոնդը՝ 3064,6 հազ. ռ. (ֆինանսական միջոցների ընդհանուր նախահաշվով հատկացված 5503 հազ. ռ. պայմաններում)[29]։

1942 թ. համեմատությամբ 1943 թ. ոչ միայն ավելացավ Արմֆանի ֆինանսավորման ծավալը, այլև նրա գիտական ու գիտատեխնիկական աշխատողների քանակը։ Արմֆանը 1943 թ. ուներ 245 գիտական և գիտատեխնիկական աշխատող։ Դա 30 մարդով կամ 13,95%-ով ավելի է, քան 1942 թ.[30]։ Նրանցից 2-ը ակադեմիկոս էր, մեկը՝ ՍՍՀՄ ԳԱ թղթակից անդամ, 23,5-ը (հաստիքային միավոր) գիտության դոկտոր, 56-ը՝ գիտության թեկնածու, 45,5-ը (հաստիքային միավոր) առանց գիտական աստիճանի ավագ գիտաշխատող, 16-ը՝ ավագ գիտաշխատողի պաշտոնակատար, 61-ը՝ կրտսեր գիտաշխատող, 40-ը՝

---

27 Նույն տեղում, թ. 52։

28 Նույն տեղում, դ. 1, 1943, թ. 52, դ. 7, 1942, թ. 43։

29 Նույն տեղում, դ. 1, 1943, թ. 52։ Վերը բերված տվյալներից երևում է, որ գիտական ու գիտատեխնիկական աշխատողների աշխատավարձի և գիտական հետազոտությունների զարգացման համար օգտագործված միջոցների գումարը հավասար չէ ֆինանսական միջոցների ընդհանուր նախահաշվով հաստատվածին։ Դա բացատրվում է նրանով, որ այդ միջոցների մի մասն օգտագործվում էր այլ ծախսերի, ասենք դրասենյակային, տնտեսական ծախսերի, գործուղումների, գրքեր ձեռք բերելու և այլնի համար։

30 Նույն տեղում, թ. 45, դ. 7, 1942, թ. 9։

գիտատեխնիկական աշխատակից։ Ընդ որում, ավելացել էր գիտաշխատողների բոլոր կոնտինգենտների թվակազմը, հատկապես գիտության թեկնածուներինը (10 հոգով) և կրտսեր գիտաշխատողներինը (7 հոգով)։ Գիտական և գիտատեխնիկական աշխատողների թվաքանակի աճ էր տեղի ունեցել Արմֆանի գրեթե բոլոր գիտահետազոտական հաստատություններում։

Արմֆանում 1943 թ. 5 մարդ պաշտպանեց դոկտորական, իսկ 8 մարդ՝ թեկնածուական դիսերտացիա[31]։ Դա ասպիրանտուրայի աշխատանքի բարելավման հետևանք էր։ 1943 թ. մայիս-հունիսին Արմֆանի ասպիրանտուրայում ընդունելություն կատարվեց։ Ասպիրանտուրա ընդունվեց 10 մարդ (8-ը հումանիտար և հասարակական, իսկ երկուսը՝ բնագիտական մասնագիտությունների գծով)։ Ընդ որում, բոլորն էլ սովորելու էին արտադրությունից կտրված, քանի որ 1943 թ. վերսկսվեց ասպիրանտներին թոշակ վճարելը, որը 1942 թ. վերացված էր։ Այդ նպատակով 1943 թ. օգտագործվեց 73 հազ. ռ.[32]։ Ընդհանուր առմամբ, Արմֆանի ասպիրանտուրայում 1943 թ. սովորում էր 18 հոգի։

Այսպիսով, չնայած որոշ թերություններին, որոնք նկատվում էին գիտական հետազոտությունների կազմակերպման ու պլանավորման բնագավառում և մասնակի բնույթ էին կրում, ինչպես և դժվարություններին՝ կապված նյութատեխնիկական անհրաժեշտ բազայի բացակայության և անբավարար կադրային ու ֆինանսական ապահովվածության հետ, գիտության զարգացման նկատմամբ կուսակցության և սովետական կառավարության հոգատարության շնորհիվ Արմֆանը ծանրակշիռ ավանդ ներդրեց մեր հայրենիքի պաշտպանական հզորության ամրապնդման գործում։

ՍՍՀՄ ԳԱ հայկական մասնաճյուղն իր գոյության 8 տարիների ընթացքում (1935—1943) հսկայական դեր խաղաց Հայաստանում մեծ գիտության ձևավորման ու զարգացման գործում և անհրաժեշտ գիտական ու նյութական բազա նախապատրաստեց Սովետական Հայաստանի գիտությունների ակադեմիայի ստեղծման համար։

ВОПРОСЫ ПЛАНИРОВАНИЯ НАУКИ В АРМЯНСКОМ ФИЛИАЛЕ АН СССР (1941—1943)

САМВЕЛ КУРЕГЯН

Резюме

В исследуемый период научные исследования Армянского филиала АН СССР (Армфана) велись в двух направлениях—изучались производительные силы, история и культура республики. В эти годы деятельность Армфана ориентировалась на выполнение задач военного времени. Усилилась связь Армфана с практикой народного хозяйства Арм. ССР. Велась определенная работа по совершенствованию планирования научных исследований. Вместе с тем наблюдался некоторый параллелизм и дублирование научных исследований, не было также должного учета проделанной работы.

Несмотря на эти трудности, Армфан внес весомый вклад в укрепление оборонной мощи нашей страны.

Армфан за 8 лет своего существования (1935—1943) сыграл выдающуюся роль в становлении и развитии большой науки в Арм. ССР, он подготовил необходимую научную и материальную базу для создания в Советской Армении Академии наук.

---

31 Նույն տեղում, գ. 1, 1943, թ. 47։

32 Նույն տեղում, թ. 24։